



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

«27» «դեկտեմբեր» 2021թ. № 998-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 6-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելված 26-րդ կետի 11-րդ ենթակետով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի պաշտոնակատարի 2021 թվականի դեկտեմբերի 24-ի N 42/45.45/44591 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1.Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020թվականի հունվարի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2018թվականի օգոստոսի 15-ի N 476-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Լ հրամանում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

- 1) հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.
 «448) Շրջակա միջավայրի նախարարության առաջին բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիրը (ծածկագիր՝ 15-33.4-Մ2-1)՝ համաձայն N 448 հավելվածի.
- 2) ուժը կորցրած ճանաչել հրամանի 1-ին կետի 303-րդ ենթակետը և հրամանի 303-րդ հավելվածը.

2.հրամանով հաստատված 300-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության առաջին բաժնի պետի (ծածկագիր՝ 15-33.4-Ղ4-1) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի 1.4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում են Բաժնի գլխավոր մասնագետը կամ Բաժնի զորահավաքի գծով ավագ մասնագետներից մեկը՝

(բացառությամբ Պաշտպանված էլեկտրոնային փոխանակման համակարգի
աշխատանքների):»

12/27/2021

X



ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼՅԱՆ

Signed by: GULYAN GRIGOR 3202780018

Գ.ԳՈՒԼՅԱՆ

« 27 » դեկտեմբերի 2021թ.
ք. Երևան